## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

### ԽԼԱՑԱԾ ԾԱՒԻՂ

*(Կ. Ֆոֆանովից)*

*Գնում եմ ...: Ուղիս նեղ է ու դժուար,*
*Չորս կողմս կանաչ խաւար է տիրում ...*
*Եւ մութ եւ անտառ ...: Հոգիս երգ չունի,*
*Եւ այս գիշերին կըրակ չի փայլում:*
*Եւ ողպէս մթին ծանրաշունչ ծածկոց*
*Ճիւղեր են հիւսուել վերաս անխըռով,*
*Եւ մի անտառին միւսն է յաջորդում,*
*Ցուզելով աչերս անանց խաւարով:*
*Ո՜ւխ եթէ այնտեղ, ծառերի միջից,*
*Փայլէր հանդարտիկ քերկրալի կըրակ,*
*Կենսաբեր, որպէս յուսոյ ճառագայթ*
*Եւ որպէս ցընորք պայծառ ու մենակ:*

### ԵՐԱԶ

*(Ազատ թարգմ. Լէոնիդ Աֆանասիևից:)*

*Երազում եմ ես մի մեծ հին ամրոց —*
*Ճուրջը ոստախիտ պարտէզ է ննջում.*
*Վառվում է երկինք ծիրանի բոցով*
*Եւ անուշահոտ գիշերն է իջնում:*
*Ստուերները մէկ մէկ փռւում են չորս կողմ,*
*Հանգչում են գրուած ամպերի նախշեր,*
*Հանդարտ, անխըռով մէգ է բարձրանում,*
*Դադար են առնում ուրախ թռչուններ:*
*Բուն հին ամրոցից սուր ճիչ արձակեց,*
*Հովիկը սուրաց մեղմիկ կոհակով,*
*Նրան ի պատասխան արօտը շրշեց,*
*Պարտէզն էլ ձայնեց նիրհած սաղարթով:*
*Հանգչում է կամաց խաղաղ երեկոն*
*Եւ տխուր ու մութ խաւարը շուտով*
*Կը պատէ լըռիկ աւերակների*
*Մոխրագոյն քարերն անթափանց քողով:*
*Ես, մտածելով անցեալի մասին,*
*Գնում եմ ... արդէն հանգաւ արեգակ.*
*Եւ պարտիզի մէջ բիւր ելեւէջով*
*Մարգարտեայ տաղեր գեղգեղեց սոխակ:*

### ԹՇՈՒԱՌՈՒԻՆ

*(Բիւրգերից):*

*Մինչդեռ ոյժ ունիս դու ամենայն օր*
*Ալրուստի համար քրտինք թափելու,*
*Ամաչիր, ով մարդ, կարկառած ձեռքով,*
*Աղքատի նըման, չոր հաց մուրալու:*

*Իսկ երբոր չունիս բընաւ ոչ մի յոյս*
*Քո ոյժի վերայ — առանց տատանման*
*Հայրենի երկիրդ օրհնելով, պառկիր*
*Եւ լուռ անմռունչ մըտիր գերեզման:*

*Նոր-Նախիջեւան*

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ.



## ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

### ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

### ՃՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ ՆԿԱՐՉԱՑ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

(Շարունակութիւն.)

Անուանի Ճիօթթօի բազմաթիւ աշակերտներն իւր մահէն յետոյ շարունակեցին իրեն սկսած գործը եւ արուեստին առաջադիմութեան նպատողներն եղան, մանաւանդ իւր ամենասիրելի աշակերտը Թատէօ-Կատտի, ապա Ստէֆանօ-Ֆիօրէնցացին որ յոյժ բնապաշտ մէկը ըլլալուն համար՝ կապիկ անուանեցաւ։ Ցետոյ Սիմոնէ-Մէմմի կամ ըստ ոմանց Սիմոնէ տի Մառթինօ, զոր գրուատած է իւր տաղերու մէջ Փէթրառքա, Փիէթրօ Լառռաթի, Փիէթրօ Քովալլինի, Ուկօլինօ, Պօնամիքօ-Պուֆֆամալքօ, Փուչչօ-Գափանա եւն եւն։ Ասոնց ամենքն ալ ջանքեր ըրած են եւ իրենց յաջորդ սերնդոց համար մեծ՛ ծառայութիւններ մատուցած իրենց գործերով, որոնք մանաւանդ Թոսքանայի մէջ ամէն անկիւն կը գտնուին ցայսօր։

Ճիօթթօէն յետոյ աչքի ընկնող ամենամեծ եւ խիզախ նկարիչը եղաւ Անտուէա Օռքանեա որ սնած Տանթէի նկարագրութեամբք եւ կրօնի բանաստեղծութեամբ, նկարեց նախ դժոխոց պատկերը Ֆիօրէնցայի Սանթա Մառիա Նովէլլա եկեղեցւոյն մէջ եւ ապա՝ վերջին դատաստանը՝ Փիզայի եզական գերեզմանատան մէջ։ Անտուէայի այս զոյգ մը մեծագործութիւնները՝ զորս աչօքս տեսած եմ, վերջին կաղապարներն են, որոց վրայ ձուլուեցաւ վերածնութեան իտալական նկարչութիւնն։

digitised by A.R.A.R.@